ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

16-ը հոկտեմբերի 2023թ.

Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի
շնորհավորական ուղերձը հայ մամուլի օրվա կապակցությամբ

Հարգելի՛ լրագրողներ, հայկական լրատվամիջոցների աշխատակիցներ.
Հոկտեմբերի 16-ի՝ հայ մամուլի օրվա կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ:

Աշխարհում և մեր հայրենիքում ընթացող ամենատարբեր իրողությունների մասին հասարակությունը մշտապես տեղեկանում է լրատվամիջոցներից, վստահում և հավատում իրեն մատուցված լրատվությանը, ձևավորում կարծիք ու վերաբերմունք, ուստի յուրաքանչյուր լրատվամիջոցի աշխատանքում առաջնային և սկզբունքային պիտի լինի օբյեկտիվ ու ճշգրտված տեղեկության հրապարակումը:

Արագ փոփոխվող օրվա լրահոսը հասարակության բոլոր շերտերին գրագետ և մատչելի ներկայացնելու համար լրատվականներն ահռելի աշխատանք են իրականացնում. վերջին շրջանում բովանդակային անդրադարձներով հայ և միջազգային հանրությանն է ներկայացվում Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների խնդիրներներն ու կարիքները. իրազեկման այս ծավալուն աշխատանքները նկատելի և գնահատելի են:

Մասնագիտական օրվա առթիվ առանձնահատուկ շնորհավորում եմ «Կոտայք TV» մարզային հեռուստաընկերության պատրաստակամ ու ճշտապահ անձնակազմին, որն ակտիվորեն հետևում է համայնքի կյանքին և մշտապես լուսաբանում տեղի ունեցող նշանակալից իրադարձությունները:
Զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին մաղթում եմ անխափան եթեր, անաչառ գործունեություն և ստեղծագործական հաջողություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ